

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2007թ. հունվարի 26-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Գ. Մարտիրոսովան և Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ընտանեկան նպաստների համակարգի արդյունավետության բարձրացում» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. հունվարի 26-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Աղազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ֆինանսական համահարթեցման համակարգի զարգացումը Հայաստանում» թեմայով կոնֆերանսին,
- ✓ 2007թ. հունվարի 31-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կոռուպցիայի ընդլայնման վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություն» թեմայով շնորհանդեսին,
- ✓ 2007թ. հունվարի 31-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՄԻԱՎ/ՉԻԱՀ» ԱՀՌԾ վերանայման շրջանակում հանդիպմանը,
- ✓ 2007թ. փետրվարի 16-ին թվով 122 հոգի ՀՀ ԱՎԾ աշխատակիցներ մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանի ժողովրդագրության և առողջապահության հարցերի հետազոտության (DHS) ազգային սեմինարին,
- ✓ 2007 թ. փետրվարի 28-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգը (նախագիծ)» փաստաթղթի ներկայացմանը: